

ՀՏԴ 036

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՉԻ
ՕԳՆԱԿԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Զադոյան Ա. Ս.

Հոդվածում ներկայացված է մանկավարժական խորհրդատվության՝ որպես նոր ուսումնական տեխնոլոգիայի, կառուցողական բաղադրատարրերը: Դիտարկվում են նաև խորհրդատվության իրականացման ձևերը և մոդելները: Հոդվածի նպատակն է ընդգծել մանկավարժական խորհրդատվության նշանակությունը՝ որպես ուսուցչի օգնականի մասնագիտական գործունեության ուղեցույց՝ ուղղված համընդհանուր ներառականության հետ կապված մանկավարժական բարդ իրավիճակների հաղթահարմանը և կրթության որակի բարձրացմանը:

Բանալի բառեր. կրթական կարիք, ուսուցչի օգնական, բուլլինգ, կրթության որակ, մանկավարժական ուղեկցում, խորհրդատվության մշակույթ, մասնագիտական վարք, մոդերատոր-խորհրդատու, խորհրդատվության մոդել, սուպերվիզիա:

Կրթական բարփոխումները ենթադրում են ուսումնական գործունեության վերակառուցման արմատական փոփոխություններ ինչպես ուսուցման գործընթացում աշակերտների գիտելիքների որակի բարձրացման, այնպես էլ դաստիարակչական աշխատանքների իրականացման մեջ: Կապված դրա հետ՝ օրեցօր ավելի են կարևորվում պետության և հասարակության կողմից ուսուցչին ուղղված պահանջները, որոնք վերաբերում են նրա աշխատանքի հիմնական արդյունքին՝ երեխայի կրթության ու դաստիարակության որակի բարձրացմանը:

Ինչպես գիտենք, ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014թ. դեկտեմբերի 1-ի «Հանրակրթության մասին» օրենքում կատարած փոփո-

խություններով հաստատվեց համընդհանուր ներառականության անցնելու անհրաժեշտությունը, որը կիրառության մեջ դրվեց այս ուսումնական տարվանից: Վերջինը ենթադրում է բոլոր երեխաների կրթական կարիքների հավասար գնահատում, դպրոցի ուսումնական, մշակութային, համայնքային միջոցառումներին նրանց ներգրավվածության աստիճանի բարձրացում: Ներառական կրթության համընդհանուր բնույթի կրթական քաղաքականության իրականացմանը զուգընթաց՝ հանրակրթական հաստատություններ մուտք գործեց նոր հաստիք՝ «ուսուցչի օգնական»:

Համընդհանուր ներառականությունը ընդունելով որպես դպրոցի ժողովրդավարացման հիմնական պայման, իսկ ժողովրդավարությունը, ըստ Պ. Բ. Պիդկասիսիտիի դիտարկման, «դպրոցի արդիականացման, վերափոխման նպատակը, միջոցն ու երաշխիքն է, որը պետք է ազդի դպրոցական կյանքի բոլոր կողմերի վրա» [2, էջ 119], այնուամենայնիվ պետք է նշենք, որ մերօրյա դպրոցներում ուսուցիչների զգալի մասը բախվում է ոչ լրիվ մշակված համակարգի, որտեղ բացակայում են հոգեբանության և մանկավարժության գծով արհեստավարժ խորհրդատուները: Տեղին է նշել նաև, որ մանկավարժական տեսության և պրակտիկայում առկա է որոշակի անհամապատասխանություն մանկավարժական հանրույթների մասնագիտական զարգացման անհրաժեշտության գիտակցման և կադրերի որակավորման բարձրացման համակարգի մշակման ռազմավարության միջև: Կապված վերոհիշյալի հետ՝ նկատենք, որ չնայած մեր կրթական համակարգում այս ուսումնական տարվանից արդեն իսկ իրենց գործունեությունը սկսել են մանկավարժի օգնականները, սակայն առկա է հակասություն ինչպես նրանց մասնագիտական որակավորման և կատարելիք գործառույթների միջև, այնպես էլ որոշակի թվով աշակերտների հետ աշխատանքների իրականացման պարտավորվածության և իրական հնարավորությունների միջև: Հարցը այն է, որ մինչև 150 աշակերտի թվով հատկացվում է մեկ մանկավարժի օգնական, և որը, ըստ ՀՀ կառավարության (26 ապրիլի 2018 թվականի N 525-Ն) որոշման, պետք է միաժամանակ իրականացնի մի շարք պաշտոնային պարտականություններ, այդ թվում՝

ա) օգնել ուսուցիչներին սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորման և իրականացման գործընթացներում.

բ) մասնակցել ուսուցչիների կողմից դասերի պլանավորման աշխատանքներին.

գ) նպաստել սովորողների ինքնակառավարման ձևավորմանը.

դ) օժանդակել ուսուցիչներին բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ուսումնական նյութերի պատրաստման գործընթացում.

ե) ըստ հաստատության տնօրինության և ուսուցչի կողմից առաջադրված նպատակի՝ դասարանում իրականացնել սովորողի ուսումնառության խնդիրների ուղղությամբ դիտարկումներ, դրանց վերաբերյալ կատարել վերլուծություններ.

զ) աջակցել ուսուցիչներին հանրակրթության պետական չափորոշիչով և առարկայական չափորոշիչներով ու ծրագրերով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար՝ ԱՌԻՊ-ով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման գործընթացներին՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ.

է) սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) հայտի հիման վրա, սոցիալական դեպքի վարման շրջանակներում մասնակցել համակարգող և խորհրդատվական մարմինների, ինչպես նաև աջակցության խմբի աշխատանքներին.

ը) մասնակցել անչափահաս սովորողի մասնակցությամբ համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններին, եթե օրենքով նախատեսված է մանկավարժի մասնակցության պահանջ:

ՀՀ կառավարության որոշմամբ, ուսուցչի օգնականին վերագրվող պարտականությունները թվարկելով, պետք է համաձայնվել այն մտքին, որ նման ծավալով աշխատանքների իրականացումը անիրատեսական է նույնիսկ նրանց կողմից աշխատանքային մեծ պատրաստակամության և մեծ փորձառության առկայության դեպքում: Ինչպես նաև հակասություն է առաջացնում աշակերտների և ուսուցչի օգնականների թվային հարաբերությունը և նման թվով աշակերտների հետ նշված պարտականությունների արդյունավետ իրականացումը, քանի որ մի շարք դասարաններում առաջացող տարաբնույթ դժվարությունների հաղթահարումը հնարավոր չէ ապահովել ուսուցչի օգնականների փոքր թվակազմով: Հավելենք նաև, որ նման պարտականություններ կատարող մասնագետը նախ պետք է իր որակավորումը ստանա բարձրագույն

դպրոցում և հստակ պատկերացում ունենալով իր գործառույթների մասին՝ կարողանա կիրառել դրանք պրակտիկ գործունեության ընթացքում: Մինչդեռ մեր կրթական համակարգում նախքան մեթոդաբանության լիարժեք մշակումը, միանգամից այն դրվում է գործածության մեջ և մի շարք տարիների ձախողված փորձից հետո կատարվում համապատասխան հետևություն, արձանագրվում թերությունները և բացասական արդյունքները: Նույնը տեղի ունեցավ նաև 12-ամյա կրթության պարագայում, որը ինչպես ցույց տվեց տարիների փորձը, իրեն չարդարացրեց:

Համաձայնենք այն մտքին, որ կրթության ոլորտում ցանկացած նորարարություն մինչև հիմնավորվելը անցնում է բազմաթիվ արգելքների միջով, որոնք դրսևորվում են մասնագիտական բարդ իրավիճակների ձևով, ապա վերջիններն իրենց հերթին պայմանավորում են ուսուցչին օգնող այնպիսի տեխնոլոգիաներ մշակելու և փորձարկելու անհրաժեշտությունը, որոնք մի կողմից կնվազեցնեն ռիսկային գործոնները մանկավարժական խնդիրների լուծման ժամանակ, մյուս կողմից կնպաստեն մանկավարժական տարբեր իրավիճակներում ծագած խնդիրների ստեղծագործական լուծմանն ու ուսուցչի նորարարական գործունեությանը:

Կապված դրա հետ՝ նշենք, որ, ուսուումնասիրելով գիտական գրականությունը, տեսնում ենք, որ այսօր արտերկրում բարձրագույն դպրոցի շրջանակներում իրականացվում է այնպիսի մասնագետների պատրաստման փորձ, որոնք ընդունակ են ցուցաբերելու խորհրդատվական օգնություն կրթական հաստատությունների աշխատակիցներին: Նովգորոդի Յարոսլավլ Իմաստունի անվան պետական համալսարանի ուսանողները, յուրացնելով դպրոցի նորարարական գործընթացների հետ կապված մոդերատոր-խորհրդատուի լրացուցիչ որակավորումը, ծանոթանում են գիտամեթոդական ուղղորդման տարբեր ձևերին, սովորում են մանկավարժական խորհրդատվության, անհատական և խմբային սուպերվիզիայի իրականացման մեթոդները, եղանակները, դրույթները և միջոցները [5, էջ 7]: Անգլիայում մանկավարժական աջակցության գաղափարները արտահայտվում են այնպիսի հասկացություններով, ինչպիսիք են "pastoral care"-պաստորային հոգածություն և "tutoring"-խնամակալություն "personal and social education"-անձնային և սոցիալական կրթություն: [2, էջ 15]: Հայաստանում նույնպես կարող է գործել խորհրդատու-մանկավարժների դպրոցը, որոնք, ստանալով բարձագույն

դպրոցում համապատասխան մասնագիտական գիտելիքներ, հանդես կգան որպես մանկավարժի օգնականներ:

Մեր հոդվածի շրջանակներում մենք կանդրադառնանք նոր ուսումնամեթոդական տեխնոլոգիայի՝ «Մանկավարժական խորհրդատվության» դիտարկմանը՝ որպես կրթական համակարգ մուտք գործած ուսուցչի օգնականի գործառույթների իրականացման ուղեցույցի:

«Մանկավարժական խորհրդատվության» վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ կան մի շարք ձևակերպումներ: Համաձայն Հ. Բուրկսի և Վ. Ստեֆլերի՝ «խորհրդատվությունը որակավորված խորհրդատուի մասնագիտական վերաբերմունքն է խորհրդատուի նկատմամբ» [4, էջ11]: Կրեսները խորհրդատուներին բնութագրում է որպես ազդեցության աղբյուրներ կամ որոշակի սոցիալական մեխանիզմներ, որոնք ձևավորում են խորհրդատուի պահվածքը [5, էջ 62]: Այս ձևակերպումներին համապատասխան՝ ամբողջական մանկավարժական խորհրդատվությունը ոչ թե տվյալ անձին խորհրդատուի կողմից որոշակի խնդրի վերաբերյալ պատրաստի լուծման հաղորդումն է, այլ նրան ուղղորդումը՝ ձևավորելու սեփական մոտեցումը տարբեր իրավիճակներում: Ներկայացնելով համառոտ ձևով մանկավարժական խորհրդատվությունը՝ նշենք, որ այն ունի իր հարցերի լայն շրջանակը, որոնցից մասնավորապես կարելի է առանձնացնել.

1. Երեխայի և ընտանիքի մանկավարժական խորհրդատվությունը, որն իրականացվելու է «դժվար» դեռահասների հետ տարվող անհատական խրատադաստիարակչական զրույցների, խմբային քննարկումների, ծնողների հետ անցկացվող անհատական և խմբային աշխատանքի ձևով:
2. Մասնագիտական՝ դիդակտիկ խորհրդատվությունը, որի հիմնական նպատակն է ուսուցիչների մասնագիտական գործունեության ձևերի, մեթոդների, տեխնոլոգիաների մասին տեսական գիտելիքների հարստացումը:
3. Մանկավարժական հանրային հետ իրականացվող խորհրդատվությունը, որն իրականացվելու է խմբային բանավեճերի, դեբատների, քննարկումների ձևով:

Մանկավարժական խորհրդատվությունը իրականացվում է խմբային և անհատական ձևերով, որոնց ընթացքում կիրառվում են մի շարք մոդելներ, այդ թվում՝ բուժող (համագործակցային), արգելքային

(բարիերային), հրահանգավորման, խթանող, բեմականացված մոդելները:

Նշենք նաև, որ մանկավարժական տարբեր իրավիճակները կարող են ձևավորել խորհրդատվության իրականացման անհրաժեշտություն, հատկապես համընդհանուր ներառականության պայմաններում, երբ առավելապես կարող են դրսևորվել ն՛ սովորողների, ն՛ մանկավարժների մոտ հարմարվողականության ռեակցիաների դժվարություններ: Խորհրդատվության անցկացման կարևորությունը պայմանավորված է նաև սովորողների (որոնց մեջ կարող են լինել առանց ծնողական խնամքի մնացած, հաշմանդամություն ունեցող, վատ սոցիալական պայմաններում ապրող երեխաներ) շրջանում նկատվող մանկական ագրեսիայի՝ բուլլինգի դրսևորումները, որոնք հանդես են գալիս որպես «Երեխայի պրոբլեմ» և պահանջում են մանկավարժական աջակցություն:

Հարկ է նկատել, որ խորհրդատվության մշակույթը զարգանում է այն դպրոցներում, որտեղ մանկավարժական հանրույթը գիտակցում է այդ խորհրդատվության անհրաժեշտությունը և պատրաստ է տարբեր դժվար իրավիճակների բաց քննարկումների իրականացմանը, ինչպես նաև կարող է իր վրա վերցնել թե՛ խորհրդատուի, թե՛ խորհրդատուի դերը: Խորհրդատվական մշակույթի փիլիսոփայությունը ենթադրում է դպրոցի և կրթության զարգացման լայն համատեքստ՝ մանկության հիմնախնդիրները, ընտանեկան դաստիարակության դժվարությունները, երեխայի սոցիալականացման բարդ գործընթացները: Խորհրդատվության մշակույթը նպաստում է մանկավարժի մասնագիտական վարքի ճշտգրիտ մոդելի ձևավորմանը:

Նկատենք, որ արդեն մանկավարժի գործող օգնականները իրենց մասնագիտական գործունեությունը ավելի լիարժեք կիրականացնեն, եթե անցնեն որոշակի ուսուցողական դասընթացներ, որոնց ընթացքում կծանոթանան մանկավարժական խորհրդատվության տեխնոլոգիայի սկզբունքներին, առանձնահատկություններին, գործառույթներին, իրականացման ձևերին, մեթոդներին, որոնք կդառնան նրանց համար գիտամեթոդական ուղղորդում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ըստ Պ. Ի. Պիդկասիստիի, հանրակրթության բովանդակությունը, մի կողմից՝ արտացոլելով հասարակության կարիքները, ամենակարևոր պայմանն է սովորողների կրթական և ճանաչողական գործունեության համար, մյուս կողմից՝ հանդես է գալիս որպես այդ գործունեության կառուցման գործիք

[3, էջ 427], որը կարելի է իրականացնել՝ ապահովելով կրթական գործընթացին սովորողների մասնակցությունը, համագործակցությունը և հավասարությունը, ընդունելով, որ նշված ցուցանիշները պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում, ապա կարելի է ասել, որ դրանց իրականացումը դառնալու է մանկավարժների և նրանց համար խորհրդատուների դերում հանդես եկող մանկավարժի օգնականների մասնագիտական գործունեության հիմնական առանցքը:

ПЕДАГОГИЧЕСКОЕ КОНСУЛЬТИРОВАНИЕ КАК НАУЧНО-МЕТОДОЛОГИЧЕСКОЕ РУКОВОДСТВО ДЛЯ РЕАЛИЗАЦИИ ФУНКЦИИ ПОМОЩНИКА УЧИТЕЛЯ

Задоян А. М.

В статье представлены конструктивные компоненты педагогического консультирования как новой технологии обучения. Рассматриваются также формы и модели консультирования. Цель данной статьи-подчеркнуть значение педагогического консультирования как руководства по профессиональной деятельности помощника учителя, ориентированного на преодоление сложных педагогических ситуаций и повышение качества образования.

Ключевые слова: образовательная потребность, помощник учителя, боулинг, качество образования, педагогическое сопровождение, культура консультирования, профессиональное поведение, модератор-консультант, модель консультирования, супервизия.

PEDAGOGICAL CONSULTATION AS A SCIENTIFIC-METHODOLOGICAL GUIDE FOR THE IMPLEMENTATION OF THE FUNCTION OF THE TEACHER ASSISTANT

Zadoyan A. M.

The article presents the constructive components of pedagogical consultation as a new learning technology. Forms and models of consultation are also considered. The purpose of this paper is to emphasize the importance of pedagogical counseling as a guide to the professional activities of an assistant teacher, focus on overcoming complex pedagogical situations and improving the quality of education.

Keywords: educational need, assistant teacher, bowling, quality of education, pedagogical support, counseling culture, professional behavior, moderator, consultant, counseling model, supervision.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Певзнер М. Н., Зайченко О. М., Горычева С. Н., Аверкин В. Н., Ширин А. Г., Петров А. В. Педагогическое консультирование. Под ред. В. А. Слостенина и И. А. Колесниковой. Учебное пособие. М.: Изд. «Академия». 2006 г. 319 с.
2. Певзнер М. Н., Зайченко О. М. Теория и практика сопровождения профессиональной деятельности педагогов.// Научные традиции и перспективы педагогик. М.: Изд. «Академия». 2001 г. 316 с.
3. Пидкасистий П. И. Педагогика. Учебное пособие для студентов педагогических вузов и педагогических колледжей. М.: Изд. «Педагогическое общество России». 1998 г. 640 с.
4. Burks H. M., Steffire B. Theories of Counseling. 3-rd Ed. NY. McGraw-Hill. 1979. 312 p.
5. Krasner L. The Therapist as a Social Reinforcement Machine //Resarch in Psycotherapy. 1962. Vol. 2. P. 61-64.

Տեղեկություններ հեղինակի մասին

Զառոյան Ա. Մ. - մանկավարժական գիտությունների թեկնածու
Շիրակի պետական համալսարան
Բենիամին գյուղի միջնակարգ դպրոց
Էլ. փոստ azadoyan@mail.ru

Տրվել է խմբագրություն 01.10.2019